«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 01-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

__ _____ 2024 թվական N ___-Ն

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 01-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշում է.**

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի՝ «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին» N 01-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 16.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 16.2-րդ և 16.3-րդ կետեր.

«16.2. Սույն կարգի 16-րդ և 16.1-ին կետերով նախատեսված դեպքերում և ժամկետներում Հանրապետության նախագահի կամ վարչապետի կողմից

ստացված նվերը արարողակարգի համար պատասխանատու պաշտոնատար անձը հանձնում է Հանրապետության նախագահի դեպքում՝ Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարին, իսկ վարչապետի դեպքում՝ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչին, ովքեր ապահովում են նվերի փոխանցումը Պետական գույքի կառավարման կոմիտե՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 25.1-ին հոդվածով նախատեսված եղանակներով այն տնօրինելու նպատակով:

16.3. Սույն կարգի 16-րդ և 16.1-ին կետերով նախատեսված դեպքերում և ժամկետներում Ազգային ժողովի նախագահի կողմից ստացված նվերը Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչության պետը հանձնում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին, ով ապահովում է նվերի փոխանցումը Պետական գույքի կառավարման կոմիտե՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 25.1-ին հոդվածով նախատեսված եղանակներով այն տնօրինելու նպատակով:».

2) 19.2-րդ կետը «անձի)» բառից հետո լրացնել «կամ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի» բառերով.

3) 19.2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 19.3-րդ կետով.

«19.3. Հանրապետության նախագահի կամ վարչապետի կամ Ազգային ժողովի նախագահի կողմից ստացված նվերը սույն կարգի 16.2-րդ և 16.3-րդ կետերում նշված անձանց կողմից Պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա՝ համաձայն ՁԵՎ 3-ի:».

4) ՁԵՎ 2-ում «զբաղեցնող անձի» բառերից հետո լրացնել «կամ վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի» բառերը.

5) լրացնել ՁԵՎ 3-ով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի

2024 թվականի _____ N __-Ն որոշման

ՁԵՎ 3

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏ

N_____

Ղեկավարվելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 01 որոշմամբ սահմանված կարգի 16-18-րդ, 19.3-րդ կետերով՝ մի կողմից

---------- (Նշել նվերը հանձնողի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները)

(այսուհետ՝ Հանձնող) և մյուս կողմից _____

(Նշել նվերը ընդունող համապատասխան մարմնի անվանումը, այդ մարմնի աշխատակազմի ղեկավարի կամ Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի անունը և ազգանունը)

_____

(այսուհետ՝ Ընդունող) ստորագրեցին սույն ակտն առ այն, որ Հանձնողը հանձնեց, իսկ Ընդունողն ընդունեց «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ կամ 9-րդ մասով սահմանված կարգով

_____

(Նշել նվերը ստացած պաշտոնատար անձի անունը, ազգանունը, հայրանունը, պաշտոնը, անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները)

կողմից ստացված նվերը:

Նվերի դասակարգումը _____

_____

Նվերի հակիրճ նկարագիրը _____

_____

Նվերի արժեքը _____

Նվերը ստանալու օրը, ամիսը, տարին _____

Նվերը ստանալու հանգամանքը _____

Այլ տվյալներ _____:

Նվերը հանձնեց՝ Նվերն ընդունեց՝

_____ _____

_____ _____

_____ _____

(ստորագրություն)
(ստորագրություն)

Կ.Տ Կ.Տ

« » ----------20 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ